«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծ պող. 25շ. ք. 27 շին.
Հեռ.՝ +37410 (510-910)4801,4802
Տեղեկատու՝ 86-86
Էլ. փոստ.՝ www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
SARAJOV BRANCH
Tigran Mets ave. 25, nb. 27 building 0010 Yerevan,
Republic of Armenia
Tel.: +37410(510-910)4801,4802
Call Center: +3741 08000-8686
E-mail.: www.aeb.am

**16348-37/60** **20.03.2023թ.**

**ԵՐԱՇԽԻՔ N Ե-48/23/0004**
**(հայտի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/61»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **4.515.400 /չորս միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի կողմից **«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/61»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված **մեկ հարյուր քսան աշխատանքային օր՝ մինչև 18.09.2023թ. ներառյալ**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարչի ժ/պ՝** **Մ. Ահարոնյան**

**«ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետի ժ/պ՝** **Մ. Մանուկյան**

Digitally signed by KOCHARYAN TIGRAN 3302860072
Date: 2023.03.20 20:38:25 GMT+04:00